

6733

ՄԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒԼԻԵՌ

# ԼԸ ՊԱՐՊՈՒԼԻԷ

ԵՒՆՏ ԶՈՒՍԱՐՉԱՆՈՒ ԿԱՏԱԿԱՆԵՑՂ ՄԻՆ ԱՐԱՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳՈՂՂԻԵՐԵՆԷ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆ 1 ՂՐԵ

1910

ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ ԵՒ ՈՐԻԻ

ԿԱԼԱԹՍ - Կ. ՊՈՒԼԻՍ

ՀԱՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԳՈՒ  
ՎԿՈՒՐԲ \*  
MANCHESTER \*  
ARMENIAN YOUNG MEN'S CLUB

84  
5-86

4-82

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՆ ՃԵՍՆ ԳՐԱՏԱՆ

20 APR 20  
18 NOV

84  
U-86

ՄՈՒԼԻԵՌ

# ԼԸ ՊԱՐՊՈՒԼԻԷ

ԿԵԻՍ ԶՈՒՍՐՃԱԼԻ ԿԱՏԱԿԱՆՈՂ ՄԻՆ ԱՐԱՐ



ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԵՐԵՆԷ

ԵՐՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԿ  
ԱԿՈՒՄԲ  
MANCHESTER  
ARMENIAN YOUNG

1910

ՏՊԱՐԱՆ ՕՆՆԻԿ ԲՈՐՍԵՂՅԱՆ ԵՒ ՈՐԻՒ

ԿԱՆՍՏԱՆ - Կ. ՊՈԼԻՍ

6733

# ԼԸ ՊԱՐՊՈՒԼԻԷ



Տեսարանն է հրապարակ : Խոր՝ Պարպուլիէի  
տան դուռը : Իրան աչ կողմը , բաւերաբեմի առաս-  
տաղին մօտ պատուհան մը ուսկից կրնայ տեսնուիլ  
փողոցի անցուղարձը :



ՏԵՍԻ, Ա.

ՊԱՐՊՈՒԼԻԷ (Առանձին)

Ստուգիւ , աս աշխարհիս վրայ ամենէն զժրազդ  
անձը ես եմ : Կին մը ունիմ որ զիս չարաչար կը  
տանջէ , ու փոխանակ խոնամութեամբ կամքս կատա-  
րելու , օրը քսան անգամ մեղքը կը խօթէ ինծի : Տու-  
նը մնալու տեղ , պորտիլը կը սիրէ . հագուելու կոկ-  
ուելու խենդ . չեմ ալ ձանձնար թէ որո՞նք են տես-  
նուած անձերը : Ո՛հ , խեղճդ Պարպուլիէ , որքան  
զժրազդ ես . բայց և այնպէս առանց պատիժի ձգե-  
լու չէ անոր օձիքը . թէ որ սպաննեմ , ձեռքս ի՞նչ  
պիտի անցնի , վերջէն զիս ալ կախաղան պիտի տա-  
նին : Ախ , ի՞նչ ընեմ , չը գիտեմ , չուարած մնացեր  
եմ . բայց ահա Պարոն Տօզթօրը սակէ կանցնի , այս  
մասին իրմէ խորհուրդ հարցնեմ :

ՏԵՍԻ, Բ.

ՆՈՅՆ ԵՒ ԲԺԻՇԿ

Պարպ . — Պարոն Տօզթօր , ես ալ ձեզ տեսնել  
պիտի գայի . խնդիր մը ունիմ . . .

Բժշ . — (Բարկուրեամբ ընդմիջելով) Անկիրթ . . .

## Ա Ն Ձ Ի Ն Ք



Լը Պարպուլիէ  
Ժօրժիպիւս  
Վալերիոս  
Աննեիբա  
Քարօ  
Վիլլըպրիէն  
Նասախօս բժիշկ մը

Անձէլիքայի ամուսինը  
» հայրը  
» սիրահարը  
Պարպուլիէի կինը  
Սպասուհի  
Ժօրժիպիւսին բարեկամը



55797-66

անգամ... բժիշկի մը հետ այդ կերպ կը խօսին առանց գլխարկի հանելու, առանց ուշադրութիւն ընելու թէ « ասիօնամ լօսի, քեմբօրիս և քեռօնե» աստանկ անյարմարութեամբ խօսքդ կը սկսիս, փոխանակ յիշելու թէ «Սալվէ, վիլ սալվիւս սիս, sol por sofporosid երիւքիսիս» . ըսէ նայինք զիս ո՞ր կարծեցիր :

Պարպ.— (Շուարած) Եիտակը, չէի գիտեր, չը գիտցայ . ուստի ներումն կը խնդրեմ . ինչքս գլուխս չէր . գիտեմ որ հրամանքդ ազնուական անձ մըն էս :

Բժշ.— Գիտես ազնուական բառին աղբիւրը ո՞ւր է ծնիլը :

Պարպ.— Կ'ուզէ վիլը ժուլթէն ծնի, կուզէ Օսլերվիլէն : Ես հրամանքդ տօքթոր կը ճանչնամ . հիմա հարցուցածիս պատասխան պիտի տամ, քու խորհուրդիդ կարօտ եմ :

Բժշ.— Նախ գիտցիր պարոն, որ ես մէկ անգամ բժիշկ չեմ, այլ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 անգամ : Սոաջին, որովհետեւ միութիւնը հիմն է և թուոց առաջինը, ես ալ բժիշկներուն առաջին կարգէն դասուելուս, բժշկաց բժիշկը և խմաստնոց խմաստունն եմ : Երկրորդ որովհետեւ ամէն բանի տեղեկանայու համար երկու գլխաւոր յատկութիւն կայ, որոնք են միտք և լսողութիւն . և որովհետեւ այս երկու յատկութիւնները ունիմ, ես ալ երկու անգամ բժիշկ եղած կըլլամ :

Պարպ.— Շատ աղէկ, տէր իմ, բայց...

Բժշ.— Երրորդ, որովհետեւ երրորդ թիւը կատարելութիւն կ'անուանի, ինչպէս Սրիսթոտ ալ կ'ըսէ ես ալ կատարեալ անձ մը ըլլալուս, երեք անգամ բժիշկ եղած կ'ըլլամ :

Պարպ.— Բայց պարոն տօքթոր...

Բժշ — Չորրորդ, որովհետեւ փիլիսոսայութիւնը չորս գլուխներէ կը բաղկանայ, բանականութիւն, բարոյականութիւն, ֆիզիքականութիւն և բնագանցութիւն, ես ալ այս չորս յատկութիւնները ունենալուս համար չորս անգամ բժիշկ եղած կըլլամ .

Պարպ.— Սատանան տանի զանոնք...

Բժշ.— Հինգերորդ, որովհետեւ 5 հասարակած կ'այ, որոնք են սէր, ազգ, տարբերութիւն, էութիւն և արկածք, առանց ասոնց հմուտ ըլլալու անկարելի է խորհիլ . ես ալ ասոնց օգուտը ճանչնալուս ու անոնց լիովին ծառայելուս համար 5 անգամ բժիշկ եղած կըլլամ :

Պարպ.— Ստիկ ըրէք, կ'աղաչեմ,

Բժշ.— Վեցերորդ, որովհետեւ վեցերորդ թիւը աշխատութեան թիւն է, ես ալ իմ վառքիս համար անխոնջ եւ անդադար աշխատելուս, վեց անգամ բժիշկ կոչուելու պատիւը ունեցած կ'ըլլամ :

Պարպ.— Համբերութիւնս կը հասնի կոր :

Բժշ.— Եօթերորդ, որովհետեւ յոթ թիւը երջանկութեան թիւն է, ես ալ մարդկային կեանքը երջանկայնելու միջոցները ձեռքիս մէջ ունենալուս, կը հարկադրուի՞ յաճախ սա քերթուածը յիշիլ «Օրքե բուաքերեպարօն» :

Պարպ.— Սլ ազատ էք, ուղածնուդ չափ գոսցէք :

Բժշ.— Ութերորդ, որովհետեւ յոթ թիւը արդարութեան թիւն է, հաւատարմութիւնը իրեն նոպասող, եւ ալ բոլոր գործերս խոնհմութեամբ ու անաչառութեամբ տեսնելուս համար 8 անգամ բժիշկ եղած կըլլամ . Իններորդ, որովհետեւ 9 մուսայք կան որոնց ամենուն ես սիրելի եղած եմ : Տասներորդ, որովհետեւ առանց միւս թիւերը յիշելու չենք կրնար տասէն անց .

նիլ, ինքը տիեզերական թիւ մըն է, իմ մէջս ալ բովանդակուած են բոլոր միւս բժիշկները. կը տեսնես ուրեմն, պարոն, որ իրաւամբ ես մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասն անգամ բժիշկ կոչուելու բարեբաղդութիւնը ունիմ:

Պարպ. — Ասոնց ամենն ալ շուտիկը տանի: Ես ալ կարծեցի թէ փիլիսոփայի մը հանդիպած եմ, որմէ կը յուսայի օգուտ քաղել, չգիտցայ թէ ծխանի մասքրեջ մըն է եղեր հանդիպածս, որ հարցուցածիս սոսանց դոհացուցիչ պատասխան մը տալու, մատներուն հետ կը խաղայ, մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, աս ինչ պիտի ըլլայ, իմ հարցուցածս աս չէ. թէ որ գոհ ընեք զիս, ես ալ ձեզ գոհ պիտի ընեմ. ստակ անգամ պիտի տամ:

Բժշ. — Ի՞նչ, ստակ պիտի տաս:

Պարպ. — Այո՛:

Բժշ. — Է՛հ, զիս մուրացկանի տեղ կը զնես. ես անանկ ստակի գլուխ ծոռոներէն չեմ, բարեկամս. թէ որ ոսկիով լեցուն քսակ մ'ալ տաս ու այս քսակը զեղեցիկ տուփի մը մէջ բովանդակի, այս տուփն ալ թանկագին պատեանի մը մէջ ու այս պատեանը բաճակելի սնտուկի մը մէջ ըլլայ. այս սնտուկն ալ իրան հետաքրքրաչարժ խուցի մը մէջ, այս խուցն ալ զարդարուն սենեակի մը մէջ ըլլայ, այս սենեակն ալ վայելուչ սրահի մը մէջ ու այս սրահը փառաւոր զեռակի մը մէջ, այս զեռակն ալ անհամեմատ միջնաբերդի մը մէջ ըլլայ ու այս միջնաբերդը հոչակաւոր քաղաքի մը մէջ գտնուի, ու այս քաղաքը պողաբեր կղզիի մը մէջ, այս կղզին հարուստ գաւառի մը մէջ ու այս գաւառն ալ բարգաւաճեալ միստրեական երկրի մը մէջ ըլլայ, այս երկիրն ալ բոլոր աշխարհիս մէջ, ուր պի-

տի ըլլայ այս բարգաւաճեալ երկիրը, այն հարուստ գաւառը, պողաբեր կղզին, այն հոչակաւոր քաղաքը, անհամեմատ միջնաբերդը, փառաւոր զեռակը, վայելուչ սրահը, այն զարդարուն սենեակը, հետաքրքրաչարժ խուցը, թանկագին պատեանը ու այն զեղեցիկ տուփը, որու մէջ պահուած պիտի մնայ ոսկիով լեցուն քսակը, քեզ ալ, ստակը ալ սատանան տանի: (Մեկնի)

Պարպ. — Սլ համբերութիւնս հատաւ. էօ՛Ֆ... չեմ կրնար շունչ առնել. սօգթորի մը պէս հագուած սգուած ըլլալուն կարծեցի թէ հետը ստակով պէտք էր խօսիլ, բայց քանի որ ստակ չէ ուզածը, ասկէ աւելի աղէկ բան չըլլար. վազեմ երթամ զինքը զբանեմ: (Մեկնի)

ՏՅՍԻՒՂ Գ.

ԱՆՃՆԷԼԻՔԱՆ, ՎԱԼԵՐԻՒՍ, ՔԱԹՕ

Անճկ. — Շատ հորհակալ պիտի ըլլամ, պարոն, եթէ երբեմն տեղ մը գացած ատենս այսպէս ինձ ընկերանաք, որովհետեւ բնաւ չեմ ակորժիր ամուսնիս սնիկս զեղծ, անառակ, արբեցող ու գինեմոլին մէկն է. ձեզի կը թողում երեւակայիլ թէ այսպիսի շինական, վերջապէս վայրենի մարդու մը քով մտայլով ինչ հաճոյք կ'զգայ կին մը:

Վալեր. — Անարժանաբար զիս կը պատուէք, տիկին, որուն համար յանձունս հորհակալ ըլլալով, պատրաստ եմ մինչեւ վերջին շունչս հաւատարմութեամբ ձեզ ծառայել:

Քաթօ. — Շչ՛ող, խօսքերնիդ փոխեցէք, անա ան... զգամն կը մօտենայ:

ՏՅՍԻՒՂ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՐՊՈՒԼԻԷ

Վալեր. — Տիկին, ստուգիւ կը ցաւիմ որսամալից լուր մը տալ ձեզի, բայց տարակոյս չկար որ զայն

ուրիշ մը պիտի խնայայիք: գիտէք թէ ձեր ազնիւ  
կըրայրը շատ անհանգիստ է:

Մնձեկ. — Բաւական է պարոն, եւ շնորհակալ եմ  
որ այս ձանձրութեան յանձնառու կըսք:

Պարպ. — (Մեկուսի) Ո՛ր առաջ, առաջ կ'ըսեմ,  
նօտարին դիմելու հարկ չմնաց, ըստ որում հոն չիգա-  
ցած անա կը անենեմ հոս անհողութեանս մէկ պը-  
տուղը. (բարձր) թշուառական կիս, հոս օտարականի  
մը հետ... միւս օր ա՛յնքան քու կտրճք բենեցի որ  
այսօր քիթէս հանես, հա:

Մնձեկ. — Ինչո՞ւ այդչափ կրակ կը կտրիք, պարոն:  
Այս ազնիւ պարոնը եկեր է՝ եղբորս անհանգիստ ը-  
լալուն լուրը ինձ տայու:

Բաթօ. — Ախ, սիրելի տիկինս, որչա՛փ կը ջաւիմ  
ձեր վրայ, մինչեւ երբ հանգիստ չպիտի թողու ձեզ  
այս խրփածը:

Պարպ. — Երբուքնիդ ալ ճամբէ կ'ելլաք կոր: Իո՞ւն  
Բաթօ, կինս գլխէ կը հանես կոր, մեր քով ծառայու-  
թեան մտնելիդ ի վեր անոր շէնքը շտրճքը փախաւ:

Բաթօ. — Էկուն ալ կարճ չէ:

Մնձեկ. — Բաթօ, սա արեւոյդը իր վիճակին մէջ  
ձգէ, չե՛ս տեսներ, այնքան խած է որ ըսածը չը  
գիտեր. ափիկ ցփիկ բերնէն դուրս կը թափէ:

ՏԵՍԻՒ Ե.

ՆՈՅՆՔ, ԺՕՐԺԻՊԻՏԻՄ ԵՒ ՎԻԼԼԸՊՐԸՔԷՆ

Ժօրժ. — Դարձեալ կու՛ւ ունին մէջերնին:

Վիլլըպ. — Նայինք ինչ է պատճառը:

Ժօրժ. — Ինչո՞ւ կը կուռիք, փեսայ, դուք հան-  
գատութիւն պիտի չունենա՞ք յաւիտեան:

Պարպ. — Սա թշուառական կիս ինձի գինով կը

կանչէ: Ահա այսպէս ծնողացդ ստճեւ ալ քեզ պզտիկ  
պիտի ձգեմ:

Ժօրժ. — Երկուքնիդ ալ գայէք ծովը ընկէք:

Պարպ. — Ի՛նչ ընեմ ես, ան է սկսողը:

Բաթօ. — Բարով խերով հետը կարգուէիր:

Վիլլըպ. — Ի՛ո՞ւն լռէ՛ Բաթօ: բարեկամք հաշտուեցէք:

ՏԵՍԻՒ Զ.

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԲԺԻՇԿԸ (Վազելով կուգայ)

Բժշ. — Ի՛նչ կայ. սա ի՛նչ աղմուկ է. կոիւնիդ  
ի՛նչ է. աղաղակ, որոտում, բոլոր թաղը ոտքի հա-  
նեցիք: Ի՛նչ կայ պարոններ, ի՛նչ կայ տեսներ. միթէ  
չե՛նք կրնար դարման մը ընել: Ե՛ս ձեր հաշտեցուցիչը  
ըլլամ. ես ձեր տան խաղաղութեան պատճառն ըլլամ:

Ժօր. — Փեսաս ու աղջիկս իրարու հետ կուռեր են:

Բժշ. — Ինչո՞ւ. ի՛նչ է պատճառը. ըսէք, սիրելիք,  
ես ձեզ հաշտեցնեմ:

Ժօր. — Պարոն...

Բժշ. — Բայց քիչ խօսքով:

Ժօր. — Այո, գլխարկնիդ դրէք, կ'աղաչեմ:

Բժշ. — Գիտէ՞ք գլխարկ բառը ուսկէ ծնունդ կառնէ:

Ժօր. — Ո՛չ:

Բժշ. — Ուրեմն ըսէք, ի՛նչ է կոիւնուն պատճառը:

Ժօր. — Ահա կըսածը պատմեմ:

Բժշ. — Չեմ կարծեր որ հոս շատ կեցնէք զիս. ըս-  
տպողական գործեր ունիմ, որոնք քաղաքը ինձ կ'ըս-  
պասեն, բայց ձեր տունը խաղաղեցնելու համար կու-  
զեմ քանի մը վայրկեան հոս մնալ:

Ժօր. — Սա ալ քանի մը բոպէի բան է:

Բժշ. — Ո՛հ, ո՛րքան գոհացուցիչ պիտի ըլլայ, եթէ  
ըսելիքդ երկու խօսքով մկրտես: Շատ խօսողները

չեմ սիրեր ես . անոնք փոխանակ մտիկ ընելու , երբևէն այնքան գլուխ կը ցաւցնեն որ , փայտ ս առնես քիչ մ'ալ զուն անոնց գլուխը ցաւցնելի' ես : Այո' , պարիկչա մարդու պարտաւորութիւնն է քիչ խօսիլ :

Ժօր .— Գիտցիր ուրեմն որ . . .

Բժշ .— Սովորաւ իր աշակերտաց երեք բան կը պատուիրէր , գործոց մէջ չափաւորութիւն . ժուժկալութիւն կերակրոց ու ըմպելեաց եւ խօսիլ համառօտաբար :

Ժօր .— Ահա ես ալ նոյնը պիտի բնեմ :

Բժշ .— Քիչ խօսքով , առանց մեծարանաց , երկարարանութեամբ ինքզինքդ մի' գրօցներ . չուտ , չուտ , Պարոն Ժօրժիպիւս , անապարհնք , երկայնարանութիւնը մէկդրի թո'ղ :

Ժօր .— Թո'ղ որ խօսիմ , Պարոն բժիշկ :

Բժշ .— Պարոն Ժօրժիպիւս , զուք շատ կը խօսիք . ուրիշ մը , ուրիշ մը պէտք է որ բսէ :

Վիլլըպ .— Պարոն բժիշկ , գիտցէք որ . . .

Բժշ .— (Սասեղով) Լոէ' , սպուշ , անպիտան զուն պատմութիւնը կ'սկսիս , մինչև որ յառաջարան մը չը կցես . ուրիշ մը , ուրիշ մը պէտք է որ պատմէ . Օրիորդ , բսէք ինծի ինչ որ պատահած է :

Մեծեկ .— Կը տեսնէք սա թշուառական անիծեալ էրիկս :

Բժշ .— Կամաց , կամաց . կաղաչեմ . Պարոնը յարեցէք , երբ ինծի պէս անաման բժիշկի մը առջև կը շանուէրք :

Մեծեկ .— Բժշկութիւնդ քեզի ըլլայ . ես ալ բժիշկ եմ երբոր ուզեմ :

Բժշ .— Դուն ալ բժիշկ ես մի' . . . ահ , զէմքդ ալ

այդպէս կը վկայէ . զուն չաղկապէն , յօղերէն , արտահանէն չըլովունքէն , սեռականէն ու համաճաքութեանէն քրիչ բան չես գիտեր : Սօսիլի , բսէ' , ինչ է կոխանայ պատճառը :

Պարպ .— Պարոն բժիշկ . . .

Բժշ .— Ո՛հ , ինչ հաճելի է բժիշկ բառով սիրելը , ո՛րքան քաղցր կը հնչէ ականջիս :

Պարպ .— Է՛հ , Պարոն բժիշկ , Աստուծոյ սիրուն , մտիկ ըրէք , կ'աղաչեմ :

Բժշ .— «ԱՏՖ ԲԵՍՊ» , ըսաւ կիկերոն :

Պարպ .— Հիմա կերոնիդ ալ պիտի ըսեմ , կիկօյիդ ալ . մտիկ պիտի ընես , սպա թէ ոչ այդ բժշկական

գլուխդ պիտի ջախջախեմ : Ինչ պիտի ըլլայ սա :

(Պարպուլիէ , Աննէլիս , Ժօրժիպիւս , Քարօ եւ Վիլլըպրիքին կ'ուզեն կոխիկ պատճառը ըսել . Բժիշկը կը ջանայ զանոնք հաւսեցնել . այս միջոցին ամենք մեկ բերան կը խօսին : Պարպուլիէ Բժիշկին ոտէն չուան մը անցունելով կ'սկսի հոս հոն փակուել . Բրժիշկը կոնակիկ մը կ'իլնայ Պարպուլիէ չուանը դէպի իրեն կը փաշ . Բժիշկը անպաղար կը խօսի ու մասուրներով իր իրաւունքը հաշուել կ'ուզէ , անանկ անխաբէրութեամբ որ իբր քե ինք չէ գետնը փռուող փաւոնը : Պարպուլիէ եւ Բժիշկ կ'աներեւութանան :)

Ժօր .— Գնա աղջիկս տունդ քաշուէ ու էրկանդ հետ սիրով վարուէ :

Վիլլըպ .— Մնաք բարով ամենուդ ալ :

(Բացի Աննէլիսայէ ամենն ալ կը մեկնին :)

Մեծեկ .— (Միևակ) Այս միջոցիս որ էրիկս հոս չգրտուիր , երթամ մօտակայ պարահանդէսը մէկ երկու անգամ դառնամ գամ' : Ով գիտէ այս ժամուս ո՛ր գինետան անկիւնը փռուած է : Թշուառականը պիտի չիմանայ իմ դուրս ելած ըլլալս : (Չախտն կը մեկնի)

ՏԵՍԻՒ Է.

ՊԱՐՊՈՒԼԻԻԷ (Աջն կը մտնէ)

Պարպ. — Այդ նգովից ծառնդ բժիշկին հետ ասանկ  
գլուխ կե լուբ. իր բոլոր գիտութիւնն ալ, տօքթորու-  
թիւնն ալ իրեն հետ քշեցի: Հիմա երթանք նայինք  
մեր տանտիկինը ինչ կերակուր պատրաստած է մե-  
զի: (Տուեր կը մտնէ)

ՏԵՍԻՒ Ը.

ԱՆՃԵԼԻԲՍ. (Չախէն կը մտնէ)

Անճել. — Մեզք որ ուշ մնացեր եմ, պարահանդէ-  
սը ցրուած գտայ. բայց հոգ չէ, ուրիշ անգամ տեղը  
կը լեցնենք: (Տան դրան զարնելով) Բա՛թօ, Բա՛թօ:

ՏԵՍԻՒ Թ.

ՊԱՐՊՈՒԼԻԻԷ (Պատուհանէն), ԱՆՃԵԼԻԲՍ.

Պարպ. — Բա՛թօ, Բա՛թօ, հէ, ո՛ւր է Բա՛թօն. աս  
ատեն դուն ո՛ւր կը գտնուիս:

Անճել. — Բաց դուռը որ ըսեմ:

Պարպ. — Եկած տեղդ գարծիր, թէ որ կուգես  
փողոցը մնացիր. այս ատեն ես դուռ չեմ բանար.  
Ինձի միտակ կը թողուս, հէ:

Անճել. — Ի՞նչ ընեմ. քովդ եղած ատենա կտիւն  
գլուխ առած չունինք: Ի՞նչպէս կուգես որ ընեմ:

Պարպ. — Տուեր մնայ, կերակուր պատրաստել,  
տանտիկին ըլլալ, զաւինքուող վրայ հոգ տանել,  
կարկտուք ընել, բայց ինչպէս կերպարեմ, զիչեր բարբ-  
հաւնած տեղդ դնա:

Անճել. — Պիտի չքանա՞ս:

Պարպ. — Պիտի չքանամ:

Անճել. — Իմ սիրական էրիկս, բաց կըսեմ:

Պարպ. — Ահ կոկորդիլոս, զիս մատնելու համար  
անուշ լեզու կը գործածես:

Անճել. — Բա՛ց, կ'ազաչեմ, բաց:

Պարպ. — Գիչեր բարբ:

Անճել. — Ի՞նչ, պիտի չքանա՞ս:

Պարպ. — Ո՛չ:

Անճել. — Չես գիժար այնպիսի կնկան մը վրայ որ  
գքեզ յանչափս կը սիրէ:

Պարպ. — Խնաս ալ խենդենաս ալ, պիտի չի  
բանամ. դուն ինձի հրապուրեցիր, խաբեցիր զիս:

Անճել. — Գիտես որ եթէ համբուրութիւնս հատիկ  
ու անգամ մը բարկանամ, անանկ բաներ կընեմ որ  
վերջէն շատ կը զլջաս:

Պարպ. — Մնառակ կին, ինչ կընաս ընել:

Անճել. — Եթէ չքանաս, հիմա սա դրանը սեմին  
վրայ ինքզինքս պիտի սպաննեմ, ու ծնողքս ասկէց  
անցած ատեն հոս գետինը փռուած պիտի գտնեն  
զիս. այն ատեն քեզի կախաղան պիտի տանին:

Պարպ. — Հա՛հ, հա՛հ, հա՛հ, դուն այդ բանը  
ընելու համար այնքան սպուշ չես:

Անճել. — Չե՞ս հաւատար: այն զանապը պատ-  
րաստ է. թէ որ այս վայրկինիս չքանաս, կուրծքիս  
պիտի խոթեմ զայն:

Պարպ. — Աղէկ ուշադրութիւն ըրէ, կազաչեմ:

Անճել. — Պիտի չի բանա՞ս ուրեմն:

Պարպ. — Հարիւր անգամ ըսի, պիտի չքանամ,  
պիտի չքանամ. զարկ ինքզինքդ, սպաննուէ, մեռիր,  
հասկցար, հոգս չէ:

Անճել. — (Չաբնել կը ձեւացնէ) Ուրեմն մնաս  
բարով. ա՛հ, կը մեռ. մ':

Պարպ. — Հէ, արդեօք այդ բանը ընելու անմտու-

Թ՛ւնը պիտի ունենայ: Ճրագը առնեմ՝ իջնեմ՝ նայիմ՝  
իտաւ է ըսածը:

Անձեկ.— Ազէկ քիթէն բռնեցի, եթէ յաջողիմ իր-  
մէ առաջ դռնէն ներս ցատկել ու զինքը դուրսը թու-  
ղուլ, բրածին փոխարէնը պիտի ընդունի:

Պարսպ.— (Գալով) Չըսի թէ այնքան ապուշ չէ  
ըսածը գործադրելու. ո՞ն ի՛նչ օգուտ, տեսէք ինչպէս  
կը փախչի. կոնակին մէկ երկու հարուած իջեցնելու  
ատենն էր... բայց երթամ հանգչիմ, ո՞ն, (Գուռն  
իմենիւն կը գոցուի): Քաթժօ, Քաթժօ, դուռը բաց:

Անձեկ.— (Պատուհանը ելած) Քաթժօ, Քաթժօ, հէ,  
Քաթժօն ի՛նչ բրաւ: Պարոն զինով այս ատեն դուրսը  
ի՛նչ գործ ունիս: Ծնողքս հիմա որ ասկեց պիտի  
անցնին, պիտի տեսնեն թէ ո՞վ է յանցաւորը. թշուա-  
ռական մարդ, զինատունէն ասզին եկած չունիս.  
անպաշտպան կը թողուս թշուառ կինդ իր չորս գա-  
ւակներովը որ դրացիէն հաց մուրայ:

Պարսպ.— Բաց դուռը կըսեմ՝ քեզի, ժանտախտ  
կին, ապա թէ ոչ հիմա գլուխդ կը ջախջախեմ:

**ՏԵՍԻՒ, Ժ.**

ՆՈՅՆՔ, ԺՕՐԺԻՊԻԻՍ, ՎԻԼԳՊՐԻՔԷՆ

Ժօր.— Իարձեալ կռիւ ունին մէջէնսինին:

Վիլլըպ.— Դուք հաշտուած չպիտի մնաք: Ի՛նչ  
բան է աս:

Անձեկ.— Չէք տեսներ որչա՞փ զինով է. այս քա-  
տեն տուն կուգայ:

Ժօր.— Աս ատեն տուն կը գտնաս, փնտրի-  
դուն իրրեւ ընտանեաց բարի հայր մը կանուխէն տուն  
գտնուիլ ու կնկանդ հետ սիրով վարուելու ես:

Պարսպ.— Գլուխս կարեցէք թէ որ տունէն պակ-

տեցայ: Սա զիմացը նստող պարոններուն հարցուց, ք  
թէ ո՞վ է աս ատեն տուն եկողը, ես թէ ան: Ո՛հ,  
անմեղութիւնը ինչպէս քողի տակ ծածկուած կը մնայ:

(Աննեյիփա տեսարան կուգայ)

Վիլլըպի.— Է՛հ ուրեմն, եկէք հաշտուեցէք, նե-  
րում ինդրէ իրմէ:

Պարսպ.— Ի՛նչ. ես ներում ինդրեմ իրմէ. . . Աս-  
տուած խելք տայ. աւելի կ'ուզեմ գլուխս պատին  
դարնել քան թէ. . . անանկ նեղացած եմ որ. . .

Ժօր.— Հա՛ աղջիկս, տեսնեմ, զրկէ երկը, ձեռք  
ձեռքի տուէք:

**ՏԵՍԻՒ, ԺԱ.**

ԱՌՍՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԲԺԻՇԿԸ՝ գիշերազգեստով ու  
գտակով, վազկէն կուգայ:

Բժշ.— Հէ, աս ի՛նչ է, դարձեալ կռիւ ունիք,  
ձեզմէ հանգստութիւն պիտի չունենանք թաղին մէջ:  
Փոթորիկ, աղաղակ, որոտում, դուք բնաւ պիտի չը-  
հաշտուիք իրարու հետ:

Վիլլըպ.— Փոթորիկը անցաւ Պարոն բժիշկ, խա-  
ղաղութիւնը կը տիրէ:

Բժշ.— Իրարու հետ խաղաղեցան մի. ուրեմն  
կ'ուզէք որ այս մասին Արիսթոտի մէկ գլուխը կար-  
գամ:

Վիլլըպ.— Շատ երկա՞ն է:

Բժշ.— Չէ, չէ, վախտուն, վախտունընդինդ երես-  
ներէ կը բաղկանայ:

Պարսպ.— Նորէն գլուխ պիտի ցաւցնէ:

Ժօր.— Փեսայ, եթէ չէք ուզեր որ գլուխնիդ  
ցաւի, դուք ալ ուրիշին գլուխը մի՛ ցաւցնէք առիթ  
մի՛ տաք որ ձեր վրայ խօսին:

Բժշ. — Չէք ուզեր:


Պարպ. — Չէ՛, վաղ անցիր, Պարոն խոտքի ջա-  
ղացք:

Բժշ. — Մնանկ է նէ մնաք խաղաղութեամբ. գիշեր  
բարի. «Լաքինե պօմա նօֆո»: (Մեկնի)

Պարպ. — Տէր ընդ քեզ. քար մըն ալ ետեւէդ:  
(Մեկուսի) թշուառական, հանգիստ չես թողուք մարդը  
որ կնկանը հետ ուզածին պէս կուռի:

Վեպու. — Մենք ալ երթանք մօտակայ ճաշարանը  
աղւոր ընթրիք մը ընենք:

— ԳՐԱԳՈՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ —



# ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, ազմամերթար Ծօզուու. թիւ 29

ԳՐԱՎԱՃԱՌ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Հաստատուլ 1868 ին

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Սուներք հին դեմքերու 1635-1900, գրեց Յ. Գ. Մրմրեա  
Կեանքի գործածութիւն, Լորտ Էյվիլիւրի. թր. Գ. Ոսկեաւ  
Լիակատար նոր երգարան կամ Բնդարձակ Քնար Հալիա  
կան, 192 Երես 172 Երգ

Արեւելի բոցեր, բանաստ. Ե. Գոյանճեան

Կարսի ժամուց, Արփիար Արփիարեան

Պարսեգ բարոյական և գործ դաստիարակ, Փ. Հազարտալ  
Վեղարաւոր հերոսը, գրեց Մմրատ Բիւրատ

Մի անտեղ զոն կամ Խորսակուած սեր, Ս. Շահնազար

Աւարայրի արծիւր կամ Վարդանանք, Ս. Բիւրատ

Բեւազնդական Հալ կայսեր ու կայսրուհիներ, 10 պոէլ.

Բուրգերէն. բանաստեղծական երկեր, Ս. Բիւրատ

Կենս. Իզմիրեան և Գուրեան Ա. ներու Ս. Գարամանճեան

Մրիս վերերը, բանաստեղծ. Աշուղ Շահնազար

Ազատարար Բանակին յաղթական մահսն ի Կ. Պոլիս

Ուխտին Ողջակեզը կամ Կոյս մնացած կինը, Ե. Ե.

Ապսիւլ Համիս Բ. Մերուժան Պարսամեան

Ապսիւլ Համիսի չերչիւրքիւնը, Տ. Շէփիկեան

Հեղինէ կամ գաղսնիք մը ի Կ. Պոլիս Յ. Հ., 2 հոր.

Թապալեաւ Փիլիկ Աղպօր Աղչիկստը, Տ. Փախազեան

Ժենրվիէլ, բարոյավէպ, Պատկերազ. թարգ. ի գաղղլիկ

Տիգրան Եւ Չարուհի, Յ. Բազրատու Նի, տոսմ 6 արալ

Մոլորեալ նամբորը կամ Զին. օքեւան, կատակ. 1 ար.

Երանոս աղբար կատակ. 1 արար, Տ. Փախազեան

Բարեկենդանի անկուսիներ կատակերգութիւն 1 արար

Ետերերուն բժիշկը և Բինախանդի Ծառայ, կտիրգ Նն

Բռնի Ամուսնութիւն, Մոլիէր, կատակերգ. 1 արար

61, պօրտի ժառանգ մնացած սնուկը Գ. Ռչոտ. կատ. 1 ար

Երկու Անվարտիներ, Մոլիէր, թարգ. ի գաղ. » »

Իլավիլի ետնի ետնիկ իրապը, Ալաթուրդա, Ալաֆրիկ.

Վերջիւնեալ գրատունը կը վաճառուին, կրօնական, պո  
բանաստեղծական, թատերական, վիպական, գաղղոսական գրքեր,  
ցիչ գնով և զեղչով: Բառատիկ զեղչ վաճառողաց: